ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

12 Նոյեմբերի չորեքշաբթի 2025
տպագրության ԺԴ տարի

156
(3187)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

4 ՀԱՆԴԻՊՈՒՄ ՆՈՒՅՆ ԴԵՍՊԱՆՆԵՐԻ ՀԵՏ, ՆՈՒՅՆ ՕՐԱԿԱՐԳՈՎ

Երեկ ՀՀ-ում հավատարմագրված Եվրամիության անդամ երկրների դիվանագիտական ներկայացուցիչները հանդիպել են ՀՀ չորս բարձրաստիճան պաշտոնյաների հետ: Հարց է առաջանում՝ ինչո՞ւ էր անհրաժեշտ, որ նույն մարդկանց ասելիքը նույն օրը հնչեր չորս տարբեր հանդիպումներում:

ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը հանդիպեց դեսպաններին. Կառավարության կայքում, սակայն, այս մասին տեղեկություն չկար, իսկ վարչապետի ֆեյսբուքյան էջում միայն ռիլ էր հրապարակված, որին կից հանդիպման բովանդակության վերաբերյալ որեւէ մեկնաբանություն գրված չէր:

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը Ազգային ժողովում ընդունեց նույն դեսպաններին:

Առանձին հանդիպմամբ ԵՄ նույն դեսպաններին խորհրդարանում ընդունեց նաեւ ԱԺ փոխխոսնակ Ռուբեն Ռուբինյանը:

Իսկ ՀՀ արտգործնախարարությունում *ՀՀ ԱԳ նախարարի տեղակալ Վահան Կոստանյանը դարձյալ հանդիպեց նույն դեսպանների հետ:*

Պաշտոնական հաղորդագրությունները «ժլատ» էին այս առումով. «Հանդիպման ընթացքում քննարկվել են Հայաստանի եւ Եվրոպական միության, ինչպես նաեւ Հայաստանի եւ ԵՄ անդամ երկրների միջեւ ընդլայնվող երկկողմ օրակարգին առնչվող մի շարք հարցեր, վիզաների ազատականացման գործընթացի շրջանակներում տեղի ունեցած զարգացումները, մասնավորապես՝ ՀՀ-ԵՄ վիզաների ազատականացման գործողությունների ծրագրի՝ հնարավորինս սեղմ ժամկետներում իրականացումը»:

Կարելի է ասել, որ Հայաստանի բարձրաստիճան պաշտոնյաների օրակարգը գրեթե ամբողջությամբ նվիրված էր դիվանագիտական շփումներին:

Այս 4 հանդիպումները հասարակական եւ փորձագիտական շրջանակում առաջացրել են որոշակի մտահոգություններ: Մասնավորապես, շրջանառվում են տեսակետներ, թե նման ակտիվ դիվանագիտական շփումները կարող են կապված լինել տարածաշրջանային նոր լարվածության եւ այն փաստի հետ, որ Խաղաղության հռչակագրի՝ օգոստոսի 8-ին ստորագրված դրույթներից որոշ կետեր վտանգված են Ադրբեջանի գործողությունների հետեւանքով. եւ այս ահազանգերը հնչեցնելու խնդիր ուներ իշխանությունը:

Այս ամենի վերաբերյալ «Ժողովուրդ» օրաթերթը կապ հաստատեց ԱԺ փոխնախագահ Ռուբեն Ռուբինյանի հետ՝ պարզելու՝ արդյոք նույն օրն անցկացված բազմաշերտ հանդիպումները պայմանավորված են խաղաղության գործընթացի շուրջ առաջացած խնդիրներով:

Ռուբինյանը, սակայն, հերքեց հանրային դաշտում շրջանառվող մտահոգությունները՝ նշելով, որ դիվանագիտական ներկայացուցչությունների հետ շփումները սովորական են «Հանդիպումները պարբերական են, դրանք տեղի են ունեցել նաեւ նախկինում: Այստեղ որեւէ արտառոց կամ մտահոգիչ բան չկա»,- նշեց ԱԺ փոխնախագահը՝ ընդգծելով, որ խաղաղության օրակարգը մնում է կառավարության առաջնահերթությունը:

Ինչպես երեկ հայտնել էինք, նոյեմբերի 18-ին լրանալու է գործարար Սամվել Կարապետյանի խափանման միջոց կալանքի ժամկետը: «Ժողովուրդ» օրաթերթին երեկ հայտնի էր դարձել, որ նախաքննական մարմինը ներքին հրահանգ է տվել՝ սահմանված ժամկետի լրանալուց յոթ օր առաջ միջնորդություն ներկայացնել դատարան՝ խափանման միջոցը երկարաձգելու վերաբերյալ: Ասել է թե՝ նախաքննական մարմինը ներկայում պատրաստվում է Սամվել Կարապետյանի կալանքը երկարացնելու մասով դիմել դատարան: Սամվել Կարապետյանի գործը քննվում է Վերաքննիչ հակակոռուպցիոն դատարանի կոռուպցիոն հանցագործությունների քննության գործերով մասնագիտացմամբ կազմի դատավոր Կարեն Ամիրյանի վարույթում: Մինչ այս պաշտոնը զբաղեցնելը Ամիրյանը 2019 թվականին եղել է ՀՀ գլխավոր դատախազությունում՝ կազմակերպական-վերահսկողական եւ իրավական ապահովման վարչությունում՝ նախ որպես ավագ դատախազ, ապա 2021 թվականի ապրիլից՝ որպես վարչության պետի տեղակալ: Համաձայն 2024 թվականի տարեկան հայտարարագրի՝ դատավորը ունի 2 անշարժ ցույք՝ 1 բնակարան ձեռք բերված 2019 թվականին եւ 1 ավտոկայանատեղի ձեռք բերված նույն տարում, Արաբկիր վարչական շրջանում: 2019 թվականը բարեբեր տարի է եղել նախկին ավագ դատախազի համար. նա նաեւ մեքենա է ձեռք բերել՝ Nissan մակնիշի: Դատավորի բանկային հաշիվների մնացորդները կազմել են 308 հազար դրամ, կանխիկ դրամական միջոցները՝ 8,5 մլն դրամ: Կարեն Ամիրյանը հաշվետու տարվա ընթացքում ստացել է 23 մլն 978 հազար դրամ եկամուտ 13 աղբյուրից: Ֆինանսական միջոցներից 5 մլն 790 հազար դրամը վարկեր են «Էվոկաբանկից» եւ «Կոնվերս» բանկից: Ստացված վարկերի եւ փոխառությունների մայր գումարի մնացորդը հաշվետու տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ կազմել է 51 մլն 657 հազար դրամ: Այս բաժնից պարզ է դառնում, որ դատավորը ունի երկու բնակարան: Մասնավորապես՝ 4 մլն 268 հազար դրամի հիփոթեքային վարկը տրամադրվել է «Պետական ծառայողներին մատչելի բնակարանով ապահովման» ծրագրի շրջանակում՝ բնակարան եւ ավտոկայանատեղի ձեռք բերելու համար, իսկ 40 մլն 906 հազար դրամը կառուցվող բազմաբնակարան շենքում բնակարանի հիփոթեքի մայր գումարն է:

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ քննչական կոմիտեում հայ առաքելական եկեղեցու հոգեւորականների առնչությամբ նոր քրեական գործ է հարուցվել: Ըստ «Ժողովուրդ»-ին հասած տեղեկությունների՝ այսօր վաղ առավոտյան ՀՀ քննչական կոմիտե են կանչել Արագածոտնի թեմի մի քանի հոգեւորականների՝ հարցաքննության: Իրավապահ համակարգից մեզ հայտնի դարձավ, որ հոգեւորականներին հորդորել են ժամը 10:00-ին լինել քննչական կոմիտեում ու հարուցված նոր քրեական վարույթով կոնկրետ հարցերի պատասխանել: Ասել է թե՝ այսօր վաղ առավոտյան Արագածոտնի թեմի մի քանի հոգեւորական կոմիտեում պետք է լինեն: Ինչ նոր մութ ամպեր են կուտակվել ու ինչ է սպասվում հոգեւորականներին՝ մանրամասները կներկայացնենք օրվա ընթացքում:

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ նոյեմբերի 16-ին կայանալիք Վաղարշապատի (Էջմիածնի) համայնքապետի ընտրությունները դարձել են իշխանական համակարգի ներսում ամենաքննարկվող թեմաներից մեկը: Վերջին ամիսներին «Քաղաքացիական պայմանագիր» կուսակցության վարչության գրեթե բոլոր նիստերում Նիկոլ Փաշինյանի գլխավորությամբ քննարկվել է այդ հարցը՝ ինչպես Արգիշտի Մեխակյանին համայնքապետ դարձնել: Ըստ աղբյուրների՝ իշխող ուժը գործի է դրել իր ողջ կուսակցական եւ վարչական ռեսուրսը. կիրակի օրը ՔՊ-ականները պետք է ամբողջ կազմով լինեն Էջմիածնում՝ թե՛ կուսակցության գրասենյակում, թե՛ տարբեր ընտրատեղամասերում: Նպատակն է՝ վերահսկել ընտրական գործընթացը եւ համոզվել, որ ամեն ինչ ՔՊ-ի սրտով է լինելու: Ճիշտ եւ ճիշտ՝ ՀՀԿ-ի օրոք կազմակերպված ընտրությունների նման, երբ պատգամավորները հաճախ իրենց թիկնազորով ընտրատեղամասերում էին կամ դրանց շուրջ՝ իրավիճակը վերահսկելու: Իշխանական շրջանակում այժմ լարված սպասումներ են. քարոզարշավի վերջին օրերն են, եւ, ինչպես մեր աղբյուրն է ձեւակերպում, «բոլորը մեկ մարդու պես վազում են Էջմիածին»՝ մասնակցելու Մեխակյանի հաղթանակի ապահովմանը: Ըստ մեզ հասած տեղեկությունների՝ ընտրարշավի ընդհանուր համակարգումն իրականացնում են տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարար Դավիթ Խուդաթյանն ու Արմավիրի մարզպետ, ՀՀԿ-ականների երբեմնի սիրելի Վահրամ Խաչատրյանը:

Մանրամասները՝ ArmLur.am կայքում:

ՀԱՐՑԱԶՐՈՒՅՑ

«ՄԵՐ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՌԱՔՆԱՀԵՐԹ ԷՐ ՀԱՄԱՐՈՒՄ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ», ԱՇՈՏՅԱՆ

«Ժողովուրդի հարցերը» հաղորդման շրջանակներում զրուցել ենք ՀՀԿ փոխնախագահ Արմեն Աշոտյանի հետ: Վերջինս ներկայացրել է ՀՀԿ-ի կառավարման շրջանի ձեռքբերումները եւ ձախողումները, ինչպես նաեւ անդրադարձել Նիկոլ Փաշինյանին իշխանության «բերելու» մասին մեղադրանքներին:

-Պարոն Աշոտյան, կար ժամանակ, որ դժվար էր պատկերացնել, թե նախկին իշխանության որեւէ ներկայացուցիչ (խոսքը հենց Արմեն Աշոտյանի մասին է խ խմբ.), ով երբեւէ կոռուպցիոն գործարքի մեջ ներգրավված չի եղել, կարող է հայտնվել կալանքի տակ, այնուհետեւ կրել էլեկտրոնային հսկող սարք («բրասլետ»): Երբեւէ պատկերացրե՞լ էիք, որ կարող եք նման կարգավիճակում հայտնվել:

-Երբ իշխանության էինք՝ իհարկե ոչ: Ցանկացած իշխանություն, անգամ ամենաարդյունավետը, այնուամենայնիվ, սկզբում կտրում է եւ ոտքերդ, եւ հետո գլուխդ: Բայց եթե խոսում ենք այսօրվա ռեժիմի մասին, ապա պետք է ասեմ՝ նրանք բացարձակ այլասերված ռեժիմ են:

Երբ 2018-ին առաջին անգամ առաջադրեցին Նիկոլ Փաշինյանին՝ որպես վարչապետի թեկնածու, մենք չտրվեցինք համաժողովրդական ճնշմանը եւ դեմ քվեարկեցինք: Այդ պատճառով այսօր պարզապես զավեշտալի է լսել մեղադրանքներ, թե մենք ենք Փաշինյանին «բերել իշխանության»: Ինչքան խոր պետք է լինի բարոյական անկումը, որ այդքանից հետո մարդիկ դեռ իրենց սխալը չընդունեն:

Երբ Փաշինյանի ընտրվելուց հետո հայտարարեցի, որ Հանրապետական կուսակցությունը լինելու է ընդդիմություն, արդեն պարզ էր, թե ինչպիսի միջավայրում ենք գործելու: Սուտ կլինի, եթե ասեմ, որ կանխատեսում էի այսպիսի ծավալի քաղաքական ռեպրեսիաներ: Առաջին խոշոր ահազանգը դրա մասին Ռոբերտ Քոչարյանի դեմ իրականացված հակահիրավական եւ քաղաքական հալածանքն էր՝ նրա անազատությունը:

Հետապնդումների, կալանավորումների երեւույթն այնպիսին է, որ մինչեւ անձամբ քեզ չի հասնում, չես գիտակցում՝ ինչպիսի վախ կարող է առաջացնել, որ դա կարող է հասնել նաեւ քեզ: Հետո սկսեցին կալանավորել իմ քաղաքական գործընկերներին, եւ նրանց նկատմամբ բռնաճնշումներ կիրառել: Իսկ 44-օրյա պատերազմի պարտությունից հետո՝ իր իշխանությունը պահպանելու համար Փաշինյանը մինչեւ այսօր պատրաստ է ամեն քայլի:

Իմ կալանքի եւ էլեկտրոնային հսկող սարքի մասին խոսել չեմ ուզում: Դա ճիշտ չեմ համարում: Ինձ հանիրավի են ճնշել, եւ այդ շինծու իրավական գործընթացը մինչ օրս շարունակվում է: Բայց չեմ ուզում տպավորություն թողնել, թե դրա մասին խոսում եմ՝ տեսախցիկի առջեւ: Ես այդ մարդը չեմ: Կարծում եմ՝ ունկնդիրներն էլ կհասկանան:

-Պարոն Աշոտյան, ՀՀԿ-ի իշխանության տարիներին թերություններ միշտ եղել են, դրա մասին բազմիցս է խոսվել: Դուք գուցե հրապարակավ չեք արտահայտվել, բայց անթաքույց տեղյակ էիք՝ ինչ է կատարվում: Ինչո՞ւ չկանխեցիք, որպեսզի չհասնեիք այն իրավիճակին, երբ քաղաքացիները դուրս եկան Հանրապետության հրապարակ՝ պահանջելով ՀՀԿ-ի եւ նախագահ Սերժ Սարգսյանի հրաժարականը:

-Ճիշտ հարց է: Ցանկացած երկրում եւ ցանկացած իշխանության օրոք թերություններ լինում են, եւ Հայաստանը բացառություն չէր: Բայց երբ համեմատում ենք մինչեւ Նիկոլ Փաշինյանի իշխանության գալը եղած իրավիճակը հետխորհրդային մյուս երկրների հետ, այդ համեմատությունը հստակ ցույց է տալիս, որ մենք զիջում էինք միայն մերձբալթյան երկրներին՝ կառավարման արդյունավետությամբ, բարեփոխումների մակարդակով, կոռուպցիայի դեմ պայքարի փորձով:

Եվ ամենակարեւորը՝ խորհրդային համակարգի փլուզման ժամանակ մենք միակ ժողովուրդն էինք, որ ազատագրական պայքարի մեջ մտանք եւ ազատագրեցինք մեր հողերը: Ոչ մի այլ ժողովուրդ խորհրդային փորձությունից այդպես պատվով դուրս չէր եկել: Եվ այսօր, եթե նժարի վրա դնենք այդ հաղթանակը, իմ ընկալմամբ՝ այն գերակշռում էր բոլոր այն ընթացիկ խնդիրներին, որոնք, իհարկե, կարող էինք լուծել եւ ավելի հեշտությամբ:

Ինչպես նախագահը մի առիթով ասաց՝ երկրի անվտանգությունը իր համար եղել է առավել կարեւոր, քան որեւէ այլ ոլորտ: Դա չէր նշանակում, թե ներքին խնդիրները մեզ համար աննշան էին, պարզապես նախագահը առաջնահերթ էր համարում արտաքին ազատությունն ու անվտանգության ապահովումը, եւ թերեւս այդ հարցում չէր սխալվում: Մեր իշխանությունը փորձում էր էվոլյուցիոն, բարեփոխումների ճանապարհով լուծել Հայաստանի խնդիրները:

Շարունակությունը՝ օրաթերթի հաջորդ համարում (13.11.2025)

Զրուցեց ՍՈՆԱ ԳՐԻԳՈՐՅԱՆԸ

ՔԱՂԱՔԱԿԱՆ ՕՐԱԿԱՐԳ

«ԵՍ ԱՌԱՋԻՆԸ ԿՈՒՏԵՄ ԱՅԴ ՑՈՐԵՆԻ ՀԱՑԸ». ԳԵՎՈՐԳ ՊԱՊՈՅԱՆ

Էկոնոմիկայի նախարար Գեւորգ Պապոյանը, պատասխանելով ֆեյսբուքյան օգտատերին՝ գրել է. «Ես առաջինը կուտեմ այդ ցորենի հացը»:

Խոսքը, հիշեցնենք, օրերս Ղազախստանից Հայաստան ներկրված ցորենի մասին է, որը հետո պարզվեց՝ եղել է 4-րդ կարգի ցորեն՝ անասնակեր:

Էկոնոմիկայի փոխնախարար Էդգար Զաքարյանը նշել է. «Եթե ներկրվում է, ուրեմն նշանակում է, որ այդ կարգի ցորեն էլ է պետք Հայաստանին»: Իսկ թե ինչու նախարարությունը չէր ասել, որ անասնակեր է գալիս, փոխնախարարը նշեց. «Ասել են՝ ցորեն է գալիս: Իսկ այդ ցորենը դիվերսիֆիկացիայի ենթակա չի՞, ցորենը ցորեն չի՞, կենդանին, որ ուտում է, հետո մեզ ինչ-որ բան չի՞ տալիս՝ կաթ կամ յուղ»:

Փոխնախարարը հավելեց՝ Ռուսաստանից ներկրվածը բարձրակարգ ցորեն է եղել:

ԻՍՐԱՅԵԼՈՒՄ ՄԱՀԱՊԱՏԻԺԸ ՕՐԻՆԱԿԱՆ ԴԱՐՁԱՎ

Իսրայելի Քնեսեթը (խորհրդարանը) առաջին ընթերցմամբ հաստատել է ահաբեկիչների համար մահապատիժ սահմանող օրինագիծը:

Այս մասին հաղորդել է Kan պետական հեռուստառադիոընկերությունը:

Օրինագծի օգտին քվեարկել է 120 պատգամավորներից 39-ը, 16-ը դեմ է քվեարկել:

Այդ օրինագիծն առաջադրել է կառավարական կոալիցիայի կազմի մեջ մտնող «Հրեական ուժեր»-ի անդամ Լիմոր Սոն Հար Մելեխը: Ըստ The Jerusalem Post թերթի տվյալների՝ օրինագիծը ենթադրում է մահապատժի կիրառում ցանկացած անձի նկատմամբ, որը «դիտավորյալ կամ անտարբերությունից ելնելով մահ է պատճառում Իսրայելի քաղաքացու, երբ այդ արարքը կատարվում է ռասիստական դրդապատճառներով կամ բնակչության որոշակի խմբի նկատմամբ ատելության պատճառով»:

Քնեսեթն այդ օրինագիծը նախնական ընթերցմամբ հաստատել էր 2023 թվականի մարտի 1-ին:

ՌՈՒՍԱԿԱՆ ԳԱԶԸ ԹԱՆԿ Է, ՀԱՐԿԱՎՈՐ ՉԷ. ՓԱՇԻՆՅԱՆԻ ԱՅԼԸՆՏՐԱՆՔԸ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ԳԱԶՆ Է

Մոտ մեկ տարի առաջ Նիկոլ Փաշինյանը չէր բացառել, որ Հայաստանն Ադրբեջանից կարող է գազ ներկրել: Նշենք, որ ներկայումս Հայաստանը գազ ստանում է ՌԴ-ից եւ Իրանի Իսլամական Հանրապետությունից, եւ դա թույլ է տալիս ամբողջությամբ ապահովել մեր գազասպառումը: Փաշինյանի այդ ելույթից հետո բազմաթիվ մասնագետներ նշում էին, որ նախ, Ադրբեջանն ինքն այս պահին չի կարող անգամ իր վերցրած պատվերները կատարել, ուր մնաց՝ նոր պատվերներ ընդունի: Բացի դրանից, ինչպես նշել էր տնտեսագետ Սուրեն Պարսյանը, ադրբեջանական գազը եվրոպական շուկայում 2-3 անգամ ավելի թանկ գնով է վաճառվում, քան մենք Ռուսաստանից ենք ձեռք բերում:

Գաղտնիք չէ՝ Հայաստանը ռուսական գազը ստանում է բացառիկ ցածր գներով, որոնք հասանելի չեն համաշխարհային էներգետիկ շուկայում: Հայաստանի Հանրապետությունը զբաղեցնում է երկրորդ տեղը՝ ռուսական գազի մատակարարումների մատչելիության առումով՝ Բելառուսից հետո: Ընդ որում, ըստ փորձագիտական գնահատականների, Հայաստանը չի գտնում գազամատակարարման այլընտրանքային աղբյուրներ, որոնք կարող են առաջարկել ռուսական գազից ավելի ցածր գին:

Ինչպես այս մասին գրում է «Փաստ» թերթը. «Ռուսաստանի գազի ներկայիս գինը Հայաստանի սահմանին կազմում է 165 դոլար՝ հազար խորանարդ մետրի դիմաց. նման գին այսօր պարզապես չկա համաշխարհային շուկայում: Ավելի պարզ պատկերացնելու համար պարզապես նշենք, որ 2025 թ. նոյեմբերին եվրոպական գազային «շուկայում» գինը մոտ 400 դոլար է հազար խորանարդ մետրի համար: Այսինքն, 2,4 անգամ բարձր, քան այն գինը, որով Հայաստանը գազ է գնում Ռուսաստանից:

Ոլորտի փորձագետները շեշտում են, որ այլընտրանքային մատակարարները օբյեկտիվորեն չեն կարող Հայաստանին առաջարկել ավելի շահառու պայմաններ գնի առումով: Նրանց համոզմամբ, եթե Հայաստանը հրաժարվի ռուսական գազից, ապա կախման մեջ է լինելու ադրբեջանական գազից, իսկ Ադրբեջանն էլ իր հերթին ցանկացած պահի կարող է կտրել գազը, այսինքն՝ գործ ունենք նաեւ անվտանգային խնդրի հետ:

Ստացվում է Հայաստանի աշխարհագրական դիրքը ռուսական գազը դարձնում է երկրի էներգետիկ անվտանգության համար օպտիմալ եւ առավել շահավետ լուծում: Կրկնենք՝ Հայաստանի համար գործող գինը միջազգային շուկաների համեմատ էականորեն ցածր է, ինչի պատճառով էլ հաճախ նշվում է, որ Հայաստանը օգտվում է «բացառիկ» պայմաններից», նշել է լրատվամիջոցը:

ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԵՐԻ ԹՎԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳ

2025 թվականի ընթացքում կամավորության սկզբունքով, իսկ 2026 թվականի հունվարից արդեն աշխատանքի ընդունման կամ աշխատանքից ազատման բոլոր դեպքերում գործատուների եւ աշխատողների համար պարտադիր կկիրառվեն էլեկտրոնային աշխատանքային պայմանագրերը: Այսինքն, եկող տարվանից բացառապես թվային հարթակով է իրականացվելու աշխատանքային պայմանագրերի կնքումը, դադարումը եւ փոփոխումը:

Էլեկտրոնային աշխատանքային պայմանագրերի հետ կապված բոլոր գործառույթները գործատուներն իրականացնում են «Հաշվետվությունների ներկայացման էլեկտրոնային համակարգ»-ի միջոցով: Թվային համակարգը գործատուներին հնարավորություն է տալիս ստեղծել եւ էլեկտրոնային ձեւաչափով ստորագրել աշխատանքային պայմանագրերը, աշխատանքի ընդունման եւ աշխատանքային պայմանագրի լուծման հրամանները, ինչպես նաեւ աշխատանքային պայմանագրերում կատարվող փոփոխությունները կամ լրացումները: Թվային համակարգից աշխատողները կարող են օգտվել «Ֆիզիկական անձանց էլեկտրոնային ծառայությունների միասնական համակարգի» միջոցով՝ մուտք գործելով նոր ստեղծված «Աշխատանքային պայմանագրեր» բաժինը: Հարթակից օգվելու համար անհրաժեշտ է ունենալ էլեկտրոնային ստորագրություն, որով էլ հնարավոր կլինի մուտք գործել համակարգ, դիտել իրենց հետ կնքված պայմանագրերը, աշխատանքի ընդունման եւ աշխատանքային պայմանագիրը լուծելու հրամաններն ու աշխատանքային համաձայնագրերը, էլեկտրոնային եղանակով ստորագրել այդ փաստաթղթերը եւ ստանալ ծանուցումներ:

Աշխատանքային պայմանագրերի թվային համակարգը հասանելի է հայերեն, ռուսերեն եւ անգլերեն: Ի դեպ, եթե նոր ընդունվող աշխատակիցների հետ աշխատանքային պայմանագրերի կնքումը էլեկտրոնային եղանակով պարտադիր է լինելու հաջորդ տարվանից, ապա այն աշխատակիցների պայմանագրերը, որոնք դեռեւս թվային չեն, գործատուները 2026 թվականի հունվարի 1-ից կպարտավորվեն տասներկուամսյա ժամկետում դրանք մուտքագրել համակարգ, իսկ աշխատողները պետք է պարզապես էլեկտրոնային ստորագրությամբ հաստատեն թվային պայմանագիրը:

ԹԱՆԿԱՐԺԵՔ ԲՐՈՆԶԵ ԽՈՐԱՔԱՆԴԱԿ

ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԻ ՆՎԵՐԸ՝ ՆԻԿՈԼ ՓԱՇԻՆՅԱՆԻՆ

Վարչապետ Նիկոլ Փաշինյանը հոկտեմբերի 18-20-ը ափխազական այցով մեկնել էր Սուրբ Աթոռ եւ Սուրբ Պետրոսի հրապարակում ներկա էր եղել Արքեպիսկոպոս Իգնատիոս Մալոյանի եւ եւս 6 այլ Երանելիների արքեպիսկոպոսման արարողությանը, որը տեղի էր ունեցել Լեւոն XIV-րդ Պապի հանդիսապետությամբ:

Այցի շրջանակում ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանը եւ Սուրբ Աթոռի պետքարտուղար, կարդինալ Պիետրո Պարոլինին հանդիպել էին:

Սուրբ Աթոռի պետքարտուղարը Փաշինյանին նվիրել էր բրոնզե խորաքանդակ՝ «Fratelli tutti» փորագրությամբ, որը նշանակում է «բոլորը եղբայրներ են»:

Նվերի արժեքը կազմել է 80 հազար 457 դրամ, որը հանձնվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովին:

Հիշեցնենք, որ «Հանրային ծառայության մասին» օրենքի 29-րդ հոդվածում, որով սահմանված են հանրային պաշտոն զբաղեցնող անձի եւ հանրային ծառայողի կողմից նվերներ ընդունելու սահմանափակումները, նշվում է, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողներին թույլատրվում է ընդունել միայն հետեւյալ նվերները.

1. պետական կամ պաշտոնական այցերի կամ միջոցառումների, ինչպես նաեւ աշխատանքային այցերի, գործուղումների շրջանակներում կամ ժամանակ տրվող նվերները կամ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունը.

2. ծառայողական օգտագործման նպատակով անվճար տրամադրվող նյութերը.

3. կրթաթոշակը, դրամաշնորհը կամ նպաստը՝ տրված հրապարակային մրցույթի արդյունքով՝ մյուս դիմորդների նկատմամբ կիրառված նույն պայմաններով եւ նույն չափանիշներով կամ թափանցիկ այլ գործընթացի արդյունքով.

4. օտարերկրյա պետությունների, միջազգային կազմակերպությունների կամ այլ անձանց կողմից տրվող արարողակարգային նվերները:

Եթե 1-ին կամ 4-րդ կետերով նախատեսված նվերի արժեքը (բացառությամբ սովորաբար կազմակերպվող հյուրասիրությունների) գերազանցում է 60.000 դրամը, ապա այն համարվում է պետական կամ համայնքային սեփականություն: Հանրային պաշտոն զբաղեցնող անձինք եւ հանրային ծառայողները պարտավոր են սահմանված կարգով այն հանձնել պետությանը կամ համայնքին:

Բացի դրանից, հանրային պաշտոն զբաղեցնող անձը եւ հանրային ծառայողը պարտավոր են իրենց կողմից ստացված թույլատրելի նվերները հաշվառել նվերների հաշվառման ռեեստրում:

40.000 դրամը չգերազանցող արժողությամբ թույլատրելի նվերները ենթակա չեն հաշվառման՝ բացառությամբ նույն աղբյուրից 6 ամսվա ընթացքում նվերի ստացման պարբերական (5 եւ ավելի) բնույթ կրող դեպքերի:

Նվերների արժեքը գնահատվում է՝ հիմք ընդունելով այն ողջամիտ շուկայական արժեքը, որը հնարավոր է գնահատել բաց աղբյուրների միջոցով:

Հավելենք նաեւ, որ հանրային պաշտոն զբաղեցնող անձանց եւ հանրային ծառայողներին, եթե որեւէ նվեր է տրվում իրենց պաշտոնեական (ծառայողական) պարտականությունների իրականացմանը վերաբերող, ապա անկախ դրա չափից, գնից, եթե անգամ այն արժե 100 դրամ, չեն կարող ընդունել:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԳԵՆԵՐԱԼ ՄԱՆՎԵԼ ԳՐԻԳՈՐՅԱՆԻ ԴՍՏԵՐԸ ՄԵՂԱԴՐԱՆՔ ԱՌԱՔԱԴՐՎԵՑ

ԱԺ նախկին պատգամավոր Մանվել Գրիգորյանի դստեր՝ ՀՀ Արմավիրի մարզի առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանի դատավոր Նաիրա Գրիգորյանին երեկ՝ նոյեմբերի 11-ին, մեղադրանք է առաջադրվել երկու հոդվածով. այս մասին «Ժողովուրդ»-ին հայտնեցին Հակակոռուպցիոն կոմիտեից: Հիշեցնենք, որ Դատախազությունը դիմել է Բարձրագույն դատական խորհուրդ՝Մանվել Գրիգորյանի դատավոր դստեր նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցելու միջնորդությամբ, եւ ԲԴԽ-ն նոյեմբերի 6-ին բավարարել է միջնորդությունը՝ նրա նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու համաձայնության վերաբերյալ: Դատավորի Նաիրա Մանվելի Գրիգորյանի լիազորությունները կասեցվել են՝ մինչեւ քրեական վարույթի ավարտը:

Իսկ ի՞նչ քրեական վարույթի մասին է խոսքը. «Ժողովուրդ»-ին հասած տեղեկությունների համաձայն՝ Արմավիրի մարզի դատավոր Նաիրա Գրիգորյանի վերաբերյալ գործը ուղարկվել է հակակոռուպցիոն կոմիտե: 2024 թվականի ՀՀ քննչական կոմիտեն հայտնել էր, որ խոշոր չափերով խարդախություն կատարելուն օժանդակելու համար կալանավորվել է Արմավիրի մարզի դատավոր Նաիրա Գրիգորյանի օգնականը: 2022-2023թթ. ընթացքում հանցավոր կազմակերպության անդամները պատրաստել եւ օգտագործել են կեղծ անձնագրեր, ամուսնության կեղծ վկայականներ, եւ իբրեւ թե ՌԴ-ում տարբեր նոտարների կողմից վավերացված, կեղծ լիազորագրեր եւ տեղեկանքներ: Հանցավոր կազմակերպության անդամները դրանք օգտագործել են պետական տարբեր մարմիններում, դատական ատյաններում եւ խարդախության եղանակով հափշտակել են չորս անշարժ գույք՝ բնակարաններ, որոնցից 3-ը Էջմիածին քաղաքում, 1-ը Երեւանում՝ հիմնականում թիրախավորելով կենդանության օրոք միայնակ բնակված տարեց եւ ժառանգ չունեցող անձանց:

Հանցավոր ճանապարհով ձեռք բերված անշարժ գույքերը խմբի անդամները վաճառել են: Բոլոր մեղադրյալների նկատմամբ որպես խափանման միջոց կիրառվել է կալանքը: Նախաքննությունը նշված 7 անձանց մասով ավարտվել է: ՀՀ քննչական կոմիտեում այս դեպքի վերաբերյալ անջատված մաս կար, որի քննությունը շարունակվում էր, եւ, ահա, մեզ հայտնի դարձավ, որ քննչական կոմիտեն անջատված մասը ուղարկել է Հակակոռուպցիոն կոմիտե՝ քննություն իրականացնելու, քանի որ գործով շոշափվում է ԱԺ նախկին պատգամավոր, գեներալ Մանվել Գրիգորյանի դատավոր դստեր՝ Արմավիրի մարզի դատավոր Նաիրա Գրիգորյանի անունը:

ՆԱԽԱՏԵՍՎՈՒՄ Է ԴԱԴԱՐԵՑՆԵԼ ՀԷՑ-Ի ԼԻՑԵՆԶԻԱՆ

ՀԷՑ-ի գլխավոր տնօրենի նախկին պաշտոնակատար Դավիթ Ղազինյանը գրում է. «Հայաստանի Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովը նոյեմբերի 13-ին նախատեսում է դադարեցնել Սամվել Կարապետյանին պատկանող «Հայաստանի էլեկտրական ցանցերի» (ՀԷՑ) բաշխման լիցենզիան:

Այս որոշումը բացահայտում է իշխանության խորքային քաղաքական նպատակները՝ սեփականության վերաբաշխման նոր, բացահայտ քաղաքական փուլի ձեւով:

Լիցենզիայի դադարեցումը՝ առանց որեւէ շուկայական կամ տեխնիկական խախտման փաստարկի, նշանակում է բացահայտ ոտնձգություն սեփականության իրավունքի դեմ: Դա համարժեք է բռնազավթման՝ փոխհատուցման քողի տակ, ինչը հակասում է ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածին եւ էներգետիկ ոլորտի կայունության ու կանխատեսելիության սկզբունքներին»,- գրել է Դավիթ Ղազինյանը:

ԻՐԱՎԱԿԱՆ

ՈՎ Է ԵՂԵԼ ՆԱԽԿԻՆ ԹԱՂԱՊԵՏԻ ՀՈՎԱՆԱՎՈՐԸ

ՈՐՈՇՈՒՄ՝ ՌԱԶՄԻԿ ՄԿՐՏՉՅԱՆԻ ԳՈՐԾՈՎ

Շենգավիթի նախկին ՔՊ-ական թաղապետ Ռազմիկ Մկրտչյանի գործով նախաքննությունը ավարտվել է: Գործը վերաբերում է ՔՊ-ի Շենգավիթի տարածքային կառավարման խորհրդի նախագահ Տիգրան Մակարյանի ծեծին:

Մակարյանի ազատությունը սահմանափակելու համար մեղադրյալի աթոռին էր հայտնվել Շենգավիթի վարչական շրջանի նախկին ղեկավար Ռազմիկ Մկրտչյանը: Օրերս դատարանը փոխել է նրա խափանման միջոցը. տնային կալանքի փոխարեն կիրառվել է վարչական հսկողություն՝ բացակայելու արգելքով:

Հիշեցնենք, որ Ռազմիկ Մկրտչյանը 2024 թվականի հունիսի 10-ին հայտարարեց իր լիազորությունները դադարեցնելու մասին, իսկ հոկտեմբերի 14-ին՝ ՔՊ կուսակցությունից դուրս գալու մասին: Նա Շենգավիթի վարչական շրջանի ղեկավարի պաշտոնում նշանակվել էր 2018 թվականին՝ ընդամենը 26 տարեկանում:

Ըստ քննության նյութերի՝ Ռազմիկ Մկրտչյանը մի խումբ անձանց հետ ծեծի է ենթարկել իր նախկին աշխատակցին՝ Շենգավիթի ՔՊ տարածքային կառույցի ղեկավար Տիգրան Մակարյանին: Վերջինս նախկինում աշխատել է թաղապետարանի քաղաքաշինության բաժնում, սակայն, Մկրտչյանի հետ լարված հարաբերությունների պատճառով, ամիսներ առաջ ազատվել էր աշխատանքից:

Կոնֆլիկտը ծագել էր այն ժամանակ, երբ թաղապետը հանձնարարել էր քանդել համայնքի մի շինություն, սակայն Մակարյանը հրաժարվել էր՝ պատճառաբանելով, որ սեփականատերն իր հարեւանն է, եւ ճիշտ կլինի, որ այդ գործով այլ աշխատակից զբաղվի, որպեսզի ինքը վատամարդ չդիտվի: Թաղապետը առարկել էր, ինչից հետո Մակարյանը դիմում էր գրել ազատման մասին: Դրանից հետո, ըստ վկաների, Մկրտչյանը սկսել էր խոչընդոտել Մակարյանի կազմակերպած կուսակցական հավաքները: Ծեծկռտուքի առիթը, ըստ մեղադրանքի, դարձել է այն, որ Մակարյանը Մկրտչյանի հասցեին հայհոյախառն արտահայտություններ էր արել նրա մտերիմներից մեկի ներկայությամբ: Թաղապետը հորդորել էր այդ մտերիմին Մակարյանին իր տուն հրավիրել՝ իբր կուսակցական հարցեր քննարկելու պատրվակով, որտեղ էլ մի քանի հոգով հարձակվել էին նրա վրա եւ ծեծել:

Դեպքից հետո մի քանի օր ոստիկաններ էին հերթապահում Մակարյանի տան մոտ, քանի որ, ըստ տեղեկությունների, Մկրտչյանը նրան սպառնացել էր՝ ասելով, որ «դրանով չի ավարտվելու»:

Այս միջադեպը լայն քննարկման առարկա էր դարձել կուսակցական շրջանակներում, եւ, ըստ տեղեկությունների, հարցը բարձրացվել էր ՔՊ-ի նիստում: Լուրը հասել էր վարչապետ Նիկոլ Փաշինյանին, որի հրահանգով էլ Ռազմիկ Մկրտչյանը կալանավորվել էր: Չնայած ծեծկռտուքը խմբակային բնույթ էր կրել, սակայն կալանավորված է եղել միայն Ռազմիկ Մկրտչյանը: Ի դեպ, ասում են՝նրա քաղաքական հովանավորն Արայիկ Հարությունյանն է, որը նույնպես Շենգավիթ համայնքից է:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ՔՐԵԱԿԱՆ ՔՐՈՆԻԿՈՆ

ՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՄԱՍԵՐ ԵՆ ԳՈՂԱՑԵԼ, ԳՈՒՄԱՐ ՊԱՀԱՆՋԵԼ

Համայնքային ոստիկանության Նոր Նորքի բաժնի ծառայողները ստացել էին օպերատիվ տեղեկություն, որ երկու երիտասարդ մեքենաներից գողանում են հաշվառման համարանիշներ ու հայելիներ եւ վերադարձնելու համար մեքենային փակցնում են «Տելեգրամի» հասցե:

Տեղեկությունն իրացվեց Ոստիկանության գվարդիայի 2-րդ գումարտակի 3-րդ վաշտի ծառայողների հետ:

Նոյեմբերի 8-ի առավոտյան՝ժամը 5-ի սահմաններում, Գյուլիքեւխյան փողոցում երիտասարդները հայտնաբերվեցին՝ գողոնը ձեռքներին: Ավտոմեքենայի հաշվառման համարանիշներն ու կողային հայելիները նետելով՝ նրանք դիմեցին փախուստի:

Աջափնյակ թաղամասի բնակիչ 23-ամյա երիտասարդի փախուստը կանխվեց, եւ շորթում կատարելու հիմնավոր կասկածով նա ձերբակալվեց ու տեղափոխվեց համայնքային ոստիկանության Նոր Նորքի բաժին: Որոշ ժամանակ անց հայտնաբերվեց նաեւ 30-ամյա երիտասարդը:

Գողության թիրախ դարձած «Ֆորդ» մակնիշի ավտոմեքենայի դիմապակուն փակցված էր տելեգրամյան հասցեով թերթիկ: «Ֆորդի» տիրոջից ընդունվեց հաղորդում. ըստ նրա՝ պատճառվել էր մոտ 100 հազար դրամի վնաս:

Եվ սա միակ դեպքը չէր: Ըստ նախնական տվյալների՝նրանք տելեգրամյան նույն հասցեով թերթիկ էին փակցրել նաեւ Հովհաննիսյան փողոցի բակերից մեկում կայանված «Հոնդա» մակնիշի ավտոմեքենայի դիմապակուն: «Հոնդայի» տերը նույնպես տվեց հաղորդում, որ նույն գիշերը գողացել են մեքենայի կողային հայելիների ապակիները:

Կազմված փաստաթղթերն ուղարկվել են Ավան եւ Նոր Նորք վարչական շրջանների քննչական բաժին:

Նախաձեռնվել է քրեական վարույթ, հանգամանքները պարզվում են:

ՀԵՏԱԽՈՒԶՎՈՂ Է ՀԱՅՏՆԱԲԵՐՎԵԼ

Համայնքային ոստիկանության «Զվարթնոց» օդանավակայանի բաժնի ծառայողները ձեռնարկած օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում նոյեմբերի 7-ին Երեւան-Կրասնոդար չվերթի հաշվառումից հետո բաժին են տարել եւ ձերբակալել 38-ամյա մի օտարերկրացու, որը հուլիսի 22-ից Ռուսաստանի Դաշնության իրավապահ մարմինների կողմից հետախուզվում էր թմրամիջոցներ կամ հոգեմետ նյութեր ապօրինի ձեռք բերելու, պահելու եւ տեղափոխելու մեղադրանքով. նրա նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը:

Հետախուզվողի հայտնաբերման մասին հայտնվել է Հայաստանի Հանրապետությունում Ինտերպոլի ԱԿԲ եւ դատախազությանը:

ԻՐԱՎԻՃԱԿ

ՆՈՐԱԾԻՆ Է ՄԱՀԱՑԵԼ

«Ժողովուրդ» օրաթերթին հասած տեղեկությունների համաձայն՝ օրեր առաջ «Աստղիկ» բժշկական կենտրոնի ծննդատուն են տեղափոխել 27-ամյա հղի կնոջ, որն ունեցել է ծննդաբերական ցավեր: Մի քանի ժամ հետո բժիշկները մոտեցել են ծննդկանի հարազատներին եւ ասել, որ նորածինը մահացել է:

Մահացած նորածնի հարազատները կատարվածում մեղադրում են բժիշկներին եւ դեպքի մասին ահազանգել են իրավապահներին:

Նորածնի մահվան դեպքի առթիվ նախաձեռնվել է քրեական վարույթ՝ բուժաշխատողի կողմից մասնագիտական պարտականությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հատկանիշներով:

Կազմված փաստաթղթերը ներկայացվել են Մալաթիայի քննչական բաժին:

Ք. ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԱՐՏԱԿԱՐԳ ՎՐԱԵՐԹ

Նոյեմբերի 10-ին մահվան ելքով վրաերթ է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 18:40-ի սահմաններում «Nissan» մակնիշի ավտոմեքենան Երեւան-Սեւան ավտոճանապարհի Աբովյանի վարչական տարածքում՝ «Բալի» հյուրանոցային համալիրի մոտ, վրաերթի է ենթարկել տղամարդ հետիոտնի:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, օպերատիվորեն ժամանած «Աբովյան» բժշկական կենտրոնի շտապօգնության բժիշկների հերթապահ խումբը արձանագրել է հետիոտնի մահը:

Դեպքի վայր են ժամանել ՀՀ ներքին գործերի նախարարության ոստիկանության պարեկային ծառայության Կոտայքի մարզի գումարտակի 2-րդ վաշտի պարեկները՝գումարտակի հրամանատար Ալբերտ Մարտիրոսյանի, գումարտակի հրամանատարի տեղակալ Վահագն Կարապետյանի, գումարտակի ծառայության ավագ տեսուչ Արտակ Ասատրյանի, գումարտակի տեխնիկայի գծով ավագ տեսուչ, օրվա պատասխանատու Արտաշես Ղազարյանի եւ վաշտի հրամանատար Դավիթ Հովհաննիսյանի գլխավորությամբ:

Տարածքը սահմանազատել են նույն վաշտի պարեկները:

Դեպքի մասին ՊԾ Կոտայքի մարզի գումարտակից տեղեկությունը փոխանցել են ՀՀ քննչական կոմիտեի Կոտայքի մարզային քննչական վարչության Աբովյանի քննչական բաժին, որտեղից ժամանել է քննչական խումբը՝ վարչության պետ Հովհաննես Չալաբյանի, վարչության պետի տեղակալ Աշոտ Մելքումյանի, Աբովյանի քննչական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար Յուրա Պապյանի եւ օրվա պատասխանատու հերթապահ քննիչի գլխավորությամբ:

Դեպքի փաստով Աբովյանի քննչական բաժնում նախաձեռնվել է քրեական վարույթ, որտեղ էլ պարզում են վարորդի եւ մահացածի ինքնությունը:

Դեպքի վայրի հարեւանությամբ բնակվող մեծ թվով քաղաքացիներ, ինչպես նաեւ հարեւանությամբ գործող մեծ թվով օբյեկտների աշխատակիցներ իրենց զայրույթի խոսքն են ուղղում պատկան մարմիններին՝ասելով, որ նշված հատվածում անընդհատ ավտովթարներ, վարերթներ, այդ թվում, ցավոք, ողբերգական դեպքեր են տեղի ունենում:

Եվ իրենք բազմաթիվ նամակներ են ուղղել պատկան մարմիններին, որ միջոցներ ձեռնարկեն ու նշված հատվածում տեղադրեն արագաչափ եւ տարածքը կահավորեն երթեւեկության համար անհրաժեշտ պարագաներով. սակայն ոչ մի դրական արդյունք:

ՈՂԲԵՐԳԱԿԱՆ ԴԵՊՔ՝ ԱԲՈՎՅԱՆՈՒՄ

Նոյեմբերի 10-ին սպանություն եւ սպանության փորձ է տեղի ունեցել Կոտայքի մարզում: Ժամը 17:30-ին ահազանգ է ստացվել «Աբովյան» բժշկական կենտրոնից եւ հայտնել են, որ դանակահարության հետեւանքով «Աբովյան» բժշկական կենտրոն է տեղափոխվել 2 քաղաքացի:

Ինչպես դեպքի վայրից հայտնում է ֆոտոլրագրող Գագիկ Շամշյանը, տեղում բժիշկները ոստիկաններին հայտնել են, որ վիրավորներից մեկը գիտակցության չգալով մահացել է, իսկ մյուսը գտնվում է վիրահատարանում ու ի վիճակի չէ կատարվածի մասին բացատրություն տալու:

Դեպքը տեղի է ունեցել Աբովյան քաղաքի Հանրապետության փողոցում. ժամանելով դեպքի վայր՝ այնտեղ եւ հարակից՝ Օգոստոսի 23-ի փողոցում հայտնաբերվել են արնանման հետքեր:

Դեպքի փաստով Աբովյանի քննչական բաժնում «սպանություն» եւ «սպանության փորձ» հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ նոյեմբերի 10-ից 11-ը ՀՀ ՆԳՆ ոստիկանության ստորաբաժանումների կողմից բացահայտվել է հանցագործության 165 դեպք, որից 5-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՊԱՐԳԵՎԱՏՐՎՈՒՄ ԵՆ

Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանին ուղղված մեր տեղեկատվական հարցմամբ հետաքրքրվել ենք. «Նոյեմբերի 5-ի դրությամբ Տավուշի մարզի սոցիալապես անապահով քաղաքացիներից քանի՞սն են դիմել դրամական աջակցության խնդրանքով, այդ դիմումներից քանիսն են քննարկվել եւ բավարարվել, ինչպես նաեւ՝ որքա՞ն գումար է հատկացվել կարիքավորներին»: Բացի դրանից, հետաքրքրվել ենք՝ նոյեմբերի 5-ի դրությամբ Տավուշի մարզպետի աշխատակազմը ինչքա՞ն պարգեւավճար է ստացել»:

Մարզպետի աշխատակազմից մեր հարցմանը պատասխանել են. «Նոյեմբերի 5-ի դրությամբ դրամական օգնության համար մարզպետի աշխատակազմ դիմում է ներկայացրել 1196 քաղաքացի, որոնցից 1018-ին տրամադրվել է դրամական աջակցություն՝ընդհանուր 49 մլն 950 հազար դրամի չափով: Նույն ամսաթվի դրությամբ մարզպետի աշխատակազմի աշխատակիցները ստացել են 52 մլն 186 հազար 500 դրամի պարգեւավճար»:

Այսպիսով, մարզպետի աշխատակազմը դրամական օգնություն հայցած 1196 քաղաքացիներից 178-ին տարբեր պատճառաբանություններով մերժել է, իսկ 1018 սոցիալապես անապահովի հատկացրել ընդհանուր 49 միլիոն 950 հազար դրամ աջակցություն:

Նիկոլ Փաշինյանի դասընկեր եւ ամուսնության քավոր, Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը, ինչպես նաեւ նրա աշխատակազմը՝ անհայտ «աշխատանքային նվաճումների» եւ «գործունեության ձեռքբերումների» համար, աղքատ եւ վարկային բեռի տակ կքած Հայաստանի պետբյուջեից այս տարվա 10 ամսվա կտրվածքով ստացել են 52 միլիոն 186 հազար 500 դրամ պարգեւավճար:

Տավուշի մարզպետարանից ստացված տեղեկատվության համաձայն՝ նոյեմբերի 5-ի դրությամբ մարզպետի աշխատակազմում կա 76 հաստիք, որից 9-ը՝թափուր:

Այսպիսով՝ բարձր աշխատավարձ ստացող Տավուշի մարզպետ Հայկ Ղալումյանը եւ նրա աշխատակազմի 66 պաշտոնյանները միասին ստացել են 2 միլիոն 236 հազար 500 դրամով ավելի պարգեւավճար, քան սոցիալական ծանր վիճակում գտնվող ու դրամական աջակցություն հայցած Տավուշի մարզի 1018 քաղաքացիները:

ՀԱՏՈՒՄՆԵՐ

«Հայանտառ» ՊՈԱԿ տնօրենի պարտականությունները կատարող Գարեգին Միրզոյանից տեղեկացել ենք 2025 թվականին Տավուշի մարզի չորս անտառտնտեսություններում նախատեսված հատումների ծավալների մասին:

Ըստ տրամադրված տվյալների՝ 2025-ին Տավուշի մարզի «Անտառտնտեսություն» մասնաճյուղերում մթերվելու է հետեւյալ քանակությամբ փայտանյութ.

«Արծվաբերդի անտառտնտեսություն» - 5394.13 խմ, որից շինափայտ՝229.4 խմ,

«Իջեւանի անտառտնտեսություն» - 769.84 խմ (շինափայտ չի նախատեսվում),

«Նոյեմբերյանի անտառտնտեսություն» - 4751.21 խմ, որից շինափայտ՝170.41 խմ,

«Սեւքարի անտառտնտեսություն» - 3054.64 խմ, որից շինափայտ՝89.86 խմ:

Այսպիսով՝ Տավուշի չորս անտառտնտեսություններում այս տարի մթերվել է ընդհանուր 13 969.82 խմ փայտանյութ, որից շինափայտ՝489.67 խմ:

Ընդհանուր առմամբ, 2024-2025 թթ. Տավուշի մարզում օրինական կերպով հատվել է 29 465.6 խմ փայտանյութ, ինչը վերջին 35 տարում, զգալիորեն նոսրացած անտառների պայմաններում բավական մեծ ծավալ է: Օրինական հատումներին, սակայն, ավելանում են նաեւ անօրինական հատումները, ինչի հետեւանքով ընդհանուր ծավալը դառնում է հսկայական ու մտահոգիչ:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ՓԱՇԻՆՅԱՆԻ «ՀՐԱՀԱՆԳՆԵՐՆ» ԻՐԱԿԱՆԱՑՎՈՒՄ ԵՆ

ԼՈՒՍԱԳՅՈՒՂԻ ԽԱՉՔԱՐԵՐԸ ԱՊԱՄՈՆՏԱԺԵԼՈՒ ՈՐՈՇՈՒՄ ԿԱ

Արագածոտնի մարզի Լուսագյուղ համայնքի բնակիչները «Ժողովուրդ» օրաթերթին ահազանգում են այն մասին, որ նոյեմբերի 10-ի առավոտից մարզի քաղաքապետարանի աշխատակիցները փորձել են գյուղի խաչքարերը ապամոնտաժել:

Տեղեկության իսկությունը պարզելու համար մենք զրուցել ենք համայնքի ղեկավար Քաջիկ Զաքարյանի հետ, որը հաստատեց մեր տեղեկությունը:

Համայնքի ղեկավարը «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում հայտնեց, որ քաղաքապետարանից նախօրոք տեղեկացրել են, որ գալու են խաչքարերն ապամոնտաժելու: Պատճառը, ինչպես համայնքապետին են հայտնել, եղել է այն, որ խաչքարերը փակում են եկեղեցու արտաքին տեսքը, եւ դրանք պետք է հանեն, որպեսզի եկեղեցին տեսանելի լինի:

Համայնքապետ Զաքարյանը հայտնեց նաեւ, որ իր տեղեկություններով՝ որոշումը քաղաքապետարանին ներկայացրել են Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարությունից:

Հետաքրքիր է սակայն այն, որ Լուսագյուղում հոգեւոր ծառայություն իրականացնող Տեր Սարգիս քահանա Սարգսյանն էլ մեզ հայտնեց, որ հրամանը մեկ այլ տեղից է փոխանցվել:

«Հրամանը ՀՀ վարչապետի աշխատակազմից է եկել: Համայնքապետարանը, գյուղի ժողովուրդը հավաքվել են եւ թույլ չեն տվել բարձրանալ (խաչքարերը ապամոնտաժող աշխատակիցներին - խմբ.), հասնել խաչքարերին: Գյուղացիները ստորագրահավաք են իրականացնում, որպեսզի դիմում բողոք ներկայացնեն՝ մշակութային ժառանգությունը ապամոնտաժելու դեմ», - ասել է նա:

Տեր Սարգիսը նշեց նաեւ, որ այդ որոշումը եկեղեցուն չեն ուղարկել, պատճառը, հավանաբար, Մայր աթոռին չպատկանելու հանգամանքն է, ուստի ինքը՝ որպես տեղի հոգեւոր հովիվ, կանգնել է իր ժողովրդի կողքին: Որոշման վերաբերյալ նա այլ մանրամասներ չհայտնեց:

Այս իրողության ֆոնին հարկ ենք համարում հիշեցնելու Նիկոլ Փաշինյանի հանդիպումը Սիսիանի ավագ դպրոցի աշակերտների հետ, որը տեղի էր ունեցել նախանցած տարի:

Փաշինյանն ասել էր. «Ուր գնում ենք, ասում են՝ եկեք խաչքար դնենք: Ինչքա՞ն խաչքար դնենք, հասկացանք՝1, 2, 10, 50, 100: Եկեք ամեն մեկի վզից մի հատ խաչքար կախենք, ասենք՝ քա՛րշ տվեք, երեխե՛ք, սա ձեր առաքելությունն է: Մեծ խաչքարեր կախենք երեխաների ոտքից, ասենք՝ դե քարշ տվե՛ք, որովհետեւ Վարդան Մամիկոնյանի սերունդներն եք դուք:

Մեր նահատակները զոհվել են, որ երեխաների վզից խաչքարերը կախե՞նք, հա՞: Ո՞չ զոհվել են, որ ապրեն, որ կյանքը վայելեն, որ կյանքից հաճույք ստանան: Այս փոփոխությունն է հիմա տեղի ունենում Հայաստանում»:

Փաստացիորեն այս իրավիճակի ֆոնին զարմանալի չէ, որ մեկ տարի անց վարչապետի անուղղակի հրահանգը ի կատար է ածվում այսօր:

ՆԱՆԻԿ ԱՂԱՍՅԱՆ

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՔԱՂԱՔԱԿԱՆ

«ԱՐՄՍԱԹ–1»–Ի ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՔՐ. ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐԾՎԵԼ Է

Տիեզերք ուղարկված հայկական առաջին «Արմսաթ-1» արբանյակի եւ ընդունիչ կայանի ձեռքբերման վերաբերյալ նախաձեռնված քրեական վարույթը կարճվել է՝ հանցանքի բացակայության հիմքով:

«Արմենպրես» լրատվականի հարցմանն ի պատասխան՝այս մասին հայտնել են ՀՀ գլխավոր դատախազությունից:

2024 թվականի նոյեմբերին ՀՀ գլխավոր դատախազությունը հայտնել էր, որ «Արմսաթ-1» արբանյակի վերաբերյալ քրեական վարույթ է նախաձեռնվել, գործը քննում է Հակակոռուպցիոն կոմիտեն:

Հայաստանի «Արմսաթ-1» արբանյակը տիեզերք էր ուղարկվել 2022 թվականի մայիսին: Դա տեղի էր ունեցել հայկական պետական «Գեոկոսմոս» բաժնետիրական ընկերության եւ իսպանական «Սատլանտիս» ընկերության համագործակցության արդյունքում: 2025 թվականի նոյեմբերի 8-ին Հայաստանի բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարար Մխիթար Հայրապետյանը հայտնել է, որ «Արմսաթ-1»-ը, ավարտում է իր առաքելությունը եւ մտնում ուղեծրից անկման (ապօրբիտացման) փուլ:

Նախարարը նշել էր, որ 3.5 տարիների ընթացքում «Արմսաթ-1» արբանյակի միջոցով ստացվել են Հայաստանի տարածաշրջանային բազմաթիվ տիեզերանկարներ՝հնարավորություն տալով դրանք օգտագործել ինչպես գիտական, այնպես էլ համակարգային նշանակությամբ: «Արմսաթ-1» արբանյակի առաքելության առանցքային հաջորդ ձեռքբերումն այն է, որ այս ծրագրի շրջանակներում հնարավորություն է ընձեռվել վերապատրաստել մասնագետների եւ ձեւավորել մասնագիտական խմբի այնպիսի կարողություններ, որոնց օգնությամբ հնարավոր կլինի կյանքի կոչել հաջորդող ծրագրերի նախագծումը, իրականացումը, արբանյակի կառավարումը, տվյալների ստացումն ու մշակումը:

Մխիթար Հայրապետյանը հավելել էր, որ «Արմսաթ-1»-ի առաքելության ընթացքում ստացված փորձը եւ ձեռք բերված տվյալներն արդեն իսկ օգտագործվում են նոր սերնդի երկրադիտարկման եւ հաղորդակցության արբանյակների նախագծման աշխատանքներում:

ՆՈՐ ՍԿԱՆԴԱԼ՝ ԱԼԵՆ ՍԻՄՈՆՅԱՆԻ ՇՈՒՐՋ

«Ժողովուրդ» օրաթերթին հայտնի դարձավ, որ Իրինա Հովհաննիսյանին մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա 2025 թվականի սեպտեմբերի 11-ին՝ ժամը 12:56-ին, քաղաքական հայացքներով պայմանավորված, տեղեկատվական, հաղորդակցական տեխնոլոգիաների օգտագործմամբ, բռնություն գործադրելու հրապարակային կոչ է արել՝ ուղղված ՀՀ Ազգային ժողովի նախագահ Ալեն Սիմոնյանին:

Այս քրեական գործը մակագրվել է դատավոր Մասիս Մելքոնյանին, ու կանխատեսելի է, թե կնոջը ինչ է սպասվում:

Ամենից տարօրինակն այն է, թե երիտասարդ կինն ի՞նչ գործողություն պետք է աներ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի նկատմամբ, որ նրան կանգնեցնեին մեղադրյալի աթոռին:

Հիշեցնենք Ալեն Սիմոնյանի շուրջ տեղի ունեցած դեպքը դեռ 2023 թվականին: Քաղաքացի Կարեն Մկրտչյանը պատմել էր, թե ինչ է տեղի ունեցել. «Քայլում էի Կասկադում, երեխաներիս հետ նախաճաշի էի գնացել, երբ նկատեցի անվտանգության աշխատակիցներին, ովքեր սկսեցին հավաքվել: Տեղեկացա, որ ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանն է այդտեղ: Մոտեցա նրան ու մի քանի անգամ բնութագրեցի իր իսկ տված բնորոշումով՝ որ նա դավաճան է: Այդ պահին ինձ մոտեցան ՊՊԾ աշխատակիցներ, բռնեցին ձեռքերիցս, ու Ալեն Սիմոնյանն ասաց՝ «դավաճանը մամադ է» ու թքեց դեմիս: Այնուհետեւ ինձ պառկեցրին գետնին եւ տարան ոստիկանական բաժանմունք»:

Այս դեպքը վեր հանելով՝ առաջանում է հարց. ինչո՞ւ իրավապահները նույն ջանասիրությամբ Ալեն Սիմոնյանին չեն կանչել պատասխանատվության: Սա հերթական վկայությունն է ընտրովի արդարադատության:

● *Անցած 1 օրվա ընթացքում հանրապետությունում արձանագրվել է ճանապարհատրանսպորտային 17 պատահար, 1 մարդ մահացել է, 17-ը՝ստացել տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:*

ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՄՆ-Ն ԼԻԲԱՆԱՆԻՑ ՊԱՀԱՆՋՆԵՐ ՈՒՆԻ

«Միացյալ Նահանգները Լիբանանից պահանջել է փակել «Հեզբոլլահ»-ի ֆինանսավորման բոլոր ուղիները եւ կոչ է արել խստացնել իրավական-ֆինանսական միջոցառումների կիրառումը՝ շարժման կողմից իր գործունեությունը ֆինանսավորելու համար օգտագործվող «կանխիկ տնտեսությանը» վերջ դնելու համար», - այս մասին հայտնում է Asharq Al-Awsat-ը:

ԱՄՆ-ն այս պահանջները ներկայացրել է երկրի ֆինանսների նախարարության Ազգային անվտանգության խորհրդի ահաբեկչության դեմ պայքարի ավագ տնօրեն Սեբաստիան Գորկայի գլխավորած պատվիրակության՝ Բեյրութ կատարած այցի ժամանակ:

«Մենք պետք է վերացնենք «Հեզբոլլահ»-ի կողմից իր ռազմական ենթակառուցվածքները վերականգնելու համար օգտագործվող կանխիկ տնտեսությունը», - նշել է պատվիրակության ղեկավարը՝ ավելացնելով, որ «Հեզբոլլահ»-ին ուղղված ցանկացած ֆինանսական արտահոսք պետք է դադարեցվի:

Տեղեկություններ են հաղորդվում, որ պատվիրակությունը «քննարկել է բանկային ոլորտից դուրս շարժման ֆինանսական ուղիները, որոնք թույլ են տվել 1 միլիարդ դոլար Իրանից հասցնել «Հեզբոլլահ»-ին», ինչպես նաեւ անդրադարձ է կատարվել ցամաքային, օդային եւ ծովային սահմանային անցումների վերահսկողությունը խստացնելու անհրաժեշտությանը:

Պատվիրակությունը նոյեմբերի 9-ին ժամանել է Բեյրութ եւ հանդիպել նախագահ Ջոզեֆ Աունի հետ: Նախագահական գրասենյակի X-ի միկրոբլոգում արված գրառման մեջ հայտարարվել է, որ «Լիբանանը խստորեն կիրառում է փողերի լվացման, մաքսանենգության կամ ահաբեկչության ֆինանսավորման մեջ դրանց օգտագործման կանխարգելման համար ընդունված ընթացակարգերը եւ խստորեն պատժում է ցանկացած տեսակի ֆինանսական հանցագործություն»:

Գրառման մեջ ընդգծվել է «Իսրայելի վրա ճնշում գործադրելու անհրաժեշտությունը՝ դադարեցնելու Լիբանանի վրա շարունակվող հարձակումները եւ ստիպելու նրան իրականացնել նախորդ տարի ձեռք բերված համաձայնագիրը»:

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Կորել է Դավիթ Սասունի Նազարյանի՝ ՀԱՊՀ-ից (Պոլիտեխնիկ) 1996 թվականին ստացած Ա 027625 դիպլոմը:

Համարել անվավեր:

«ԱԿԲԱ» ԼԻԶԻՆԳ - Alex Home Furniture

ՓՈՔՐ ԱՐՏԱԴՐԱՄԱՍԻՑ ՄԻՆՉԵՎ ԿԱՀՈՒՅՔԻ ԽՈՇՈՐ ԱՐՏԱԴՐՈՂ

Ավելի քան քսանամյա պատմությամբ Alex Home Furniture-ը սպառողներին է ներկայացնում բազմաֆունկցիոնալ եւ նորառոճ կահույք բնակարանների ամբողջական կահավորման համար: Կահույքի արտադրությունը փակ ցիկլով է. կահույքը սկզբից մինչեւ վերջ ստեղծվում է ընկերության ավտոմատացված արտադրությունում:

Արտադրության գործընկերը Հայաստանի լիզինգային շուկայի առաջատար Ակբա Լիզինգն է, որի աջակցությամբ էլ Alex Home Furniture-ը համալրվել է եվրոպական լավագույն սարքավորումներով եւ ամբողջությամբ ավտոմատացվել, ինչի արդյունքում 4 տարում ընկերությունը խնայել է տարեկան շուրջ 6000 եվրո. այսքան գումարի հումք էր վնասվում միայն տեղափոխության ընթացքում

«Մեր ընտանեկան բիզնեսը հիմնադրվել է 2004թ.-ին՝ հայրիկիս կողմից: Այն ժամանակ ընկերությունն իրենից ներկայացնում էր երեք հոգուց բաղկացած փոքրիկ արտադրամաս՝ հասարակական շենքի առաջին կիսանկուղային հարկում: Բնականաբար չկար ավտոմատացում. սկսել էին մի քանի հաստոցով: Ամբողջ արտադրական մակարդակը, որն ունենք հիմա, ձեւավորվել է «Ակբա» Լիզինգի մասնակցությամբ. առանց «Ակբա» Լիզինգի մենք կլինեինք շարքային, չավտոմատացված, պարզ արտադրություն, որն այսօրվա իրականության մեջ երկար ապագա չունի: Այն, ինչ արտադրում ենք՝ մեր կորպուսային կահույքը, առանց ավտոմատացման այլեւս չի աշխատի: Մենք չէինք հասնի այնտեղ, որտեղ հիմա ենք, եթե չլիներ «Ակբա» Լիզինգն ու ֆինանսավորումը: «Ակբա» Լիզինգը հուսալի գործընկեր է, երբեւէ չեմ ունեցել անպատասխան հարց կամ չլուծված խնդիր: Մեզ համար շատ կարեւոր է երկու գործընկերների միջեւ պատասխանատվությունը, որը միշտ տեսել եւ գնահատել եմ», - նշել է Alex Home Furniture-ի հիմնադիր Ալեքսանդր Ալեքսանդրյանը:

Առաջիկայում ընկերությունը նախատեսում է ընդլայնվել եւ սկսել նոր արտադրամասի կառուցումը:

«Ակբա» Լիզինգի 100% բաժնետերն «Ակբա» բանկն է:

«Ակբա» Լիզինգը վերահսկվում է ՀՀ ԿԲ կողմից:

«ԻԴՐԱՄ ՋՈՒՆԻՈՐ»

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԳՐԱԳԻՏՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՄՐՑՈՒՅԹԻ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

Վերջապես Junius ֆինանսական գրագիտության մրցույթի արդյունքները հայտնի դարձան: 3-8-րդ դասարանների 9 երեխա զբաղեցրել էին 1-3-րդ հորիզոնականներ, եւ «Իդրամում» հյուրընկալվելով՝ ստացել իրենց մրցանակները՝ սեղանի խաղերից ու հեծանիվից մինչեւ երաժշտական գործիք, ֆոտոխցիկ ու գաջեթներ:

Արդեն պատմել ենք, որ Idram Junior հավելվածում Junius խաղը հայտնվել է դեռ անցյալ տարի: Այս տարի այն վերածվել է մրցաշարի, որի ընթացքում յուրաքանչյուր մրցույթի հաղթողները կարող են ստանալ արժեքավոր նվերներ Idram Junior-ից:

Junius մրցույթներին կարող են մասնակցել 3-8-րդ դասարանի աշակերտները: Նրանք խաղի 50 մրցափուլերը պետք է անցնեն հնարավորինս արագ եւ կուտակեն առավելագույն միավորներ: Ի դեպ, մրցանակները տրամադրվում են միայն այն հաղթող մասնակիցներին, որոնք ծնողի կողմից նույնականացված են որպես Idram Junior օգտատերեր եւ պատասխանել են հենց իրենց տարիքին համապատասխան հարցաշարի հարցերին: Տարիքային խումբը կարելի է ընտրել կարգավորումներ բաժնից:

Junius մրցաշարի առաջին մրցույթը տեւել է սեպտեմբերի 17-ից հոկտեմբերի 16-ը: Այն եզրափակվեց յուրաքանչյուր տարիքային խմբում առավելագույն միավորներ վաստակած եռյակների հետ հանդիպմամբ, որի ընթացքում երեխաները կիսվեցին խաղից ստացած տպավորություններով ու փորձառությամբ: Հանդիպումն ավարտվեց Idram Junior-ի կողմից սահմանված մրցանակների հանձնմամբ:

Նշենք, որ Junius ֆինանսական գրագիտության երկրորդ մրցույթն արդեն մեկնարկել է եւ կտեւի մինչեւ դեկտեմբերի 3-ը:

Եթե դեռ չես խաղում Junius, ապա հիմա ամենաճիշտ պահն է ցուցաբերելու քո ֆինանսական գիտելիքները եւ պայքարելու հրաշալի մրցանակների համար, որոնք կարող ես տեսնել հենց Idram Junior հավելվածում:

Idram Junior հավելվածը նախատեսված է 8-16 տարեկան օգտատերերի համար, որի միջոցով երեխաները հնարավորություն են ստանում անկանխիկ գումար ունենալ, անհպում վճարումներ կատարել, խնայել եւ ֆինանսական գրագիտություն սովորել, իսկ ծնողները՝ վերահսկել երեխաների ֆինանսական գործողությունները ժամանակակից եւ անվտանգ գործիքի միջոցով:

«Ժողովուրդ» օրաթերթում եւ ArmLur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ՄՇԱԿՈՒՅԹ

ԲՈՒՔԵՐՅԱՆ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԳՐԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿ

ՀՈՒՆԳԱՐԱ-ԲՐԻՏԱՆԱՑԻ ԳՐՈՂ ԴԵՅՎԻԴ ՍՈԼՈՅԸ՝ ԴԱՓՆԵԿԻՐ

Նոյեմբերի 10-ին՝ երկուշաբթի, հայտարարվեց 2025 թվականի Բուքերյան միջազգային գրական մրցանակի դափնեկրի անունը: Մրցանակին արժանացավ հունգարա-բրիտանացի գրող Դեյվիդ Սոլոյը՝ իր «Մարմին» («Flash») վեպի համար: Այս մասին հաղորդում է The Guardian-ը:



Վեպը սկսվում է ցնցող միջադեպով. դեռահաս Իշտվանը, ապրելով մոր հետ Հունգարիայի բազմաբնակարան համալիրներից մեկում, դառնում է իր շրջապատում տեղի ունեցած դրամատիկ իրադարձության ականատեսը: Հետագայում հեղինակը ներկայացնում է նրա կյանքի ճանապարհը՝ ծառայությունը բանակում, ապա՝ տեղափոխությունը Լոնդոն, որտեղ նա սկսում է աշխատել բավականին հարուստ մարդկանց համար: Կարճ ու խտացված արձակով գրված վեպը, ըստ մրցանակի կայքում ներկայացված բնութագրի, ուսումնասիրում է տղամարդկայնության, դասային պատկանելիության, միգրացիայի, հոգեբանական տրավմայի, սեքսուալության եւ իշխանության թեմաները:

«Դատավորները լավագույն վեց գործերի շուրջ քննարկում են իրականացրել ավելի քան հինգ ժամ:

Այն գիրքը, որին մենք անընդհատ վերադառնում էինք, եւ որն առանձնանում էր մյուս հիասքանչ վեպերից, հենց «Մարմինն» էր: Այն եզակի ստեղծագործություն է. նման բան երբեք չէինք կարդացել: Շատ առումներով մռայլ գիրք է, բայց կարդալն իսկական հաճույք է», - ասել է Բուքերյան մրցանակի ժյուրիի նախագահ Ռոդի Դոյլը:

«Մարմին»-ը Դեյվիդ Սոլոյի վեցերորդ գեղարվեստական ստեղծագործությունն է: Նա առաջին անգամ Բուքերյան մրցանակի շորթլիսթում էր հայտնվել դեռեւս 2016 թվականին:

Բացի Ռոդի Դոյլից, ժյուրիի կազմում ընդգրկված էին Բուքերյան մրցանակի դափնեկիր, վիպագիր Այոբամի Ադեբայոն, դերասանուհի, պրոդյուսեր եւ հրատարակիչ Սարա Ջեսիկա Փարքերը, գրող, հեռուստահաղորդավար եւ գրական քննադատ Քրիս Փաուերը, ինչպես նաեւ The New York Times-ի բեսթսելերների հեղինակ եւ Բուքերյան մրցանակի դափնեկիր Քայլի Ռիդը:

Ժյուրին այս տարի ուսումնասիրել է մրցույթ ներկայացված 153 գիրք:

Հավելենք, որ նոյեմբերի 10-ի երեկոյան Լոնդոնում կայացած արարողության ժամանակ Սոլոյը նաեւ ստացել է 50 000 ֆունտ ստեռլինգ պարգեւատրություն:

Բուքերյան մրցանակը շնորհվում է ամեն տարի անգլերեն լեզվով լավագույն գրքին՝ անկախ հեղինակի քաղաքացիությունից: 2024 թվականին հաղթող է ճանաչվել բրիտանացի գրող Սամանթա Հարվին՝ իր «Ուղեծրում» վեպով:

ԷՄՄԱ ՄԻՔԱՅԵԼՅԱՆ

ՇՈՈՒ ԲԻԶՆԵՍ

«ՄԵԴԱԼԻ ՀԱԿԱՌԱԿ ԿՈՂՄԸ» ՖԻԼՄԸ ՄՐՑԱՆԱԿՆԵՐԻ Է ԱՐԺԱՆԱՑԵԼ ՀՈԼԻՎՈՒԴՈՒՄ

Ռեժիսոր, սցենարիստ, պրոդյուսեր եւ դերասանուհի Աննա Մաքսիմի «Մեդալի հակառակ կողմը» կինոնկարը մրցանակների է արժանացել Հոլիվուդում կայացած ARPA միջազգային կինոփառատոնի շրջանակում:

Այն հաղթող է ճանաչվել «Լավագույն լիամետրաժ ֆիլմ» անվանակարգում, իսկ Աննա Մաքսիմն արժանացել է «Ծագող աստղ» մրցանակին:

Այս մասին դերասանուհին հայտնել է «Ֆեյսբուք»-ի իր պաշտոնական էջում արված գրառմամբ:

«Մեդալի հակառակ կողմը» գեղարվեստական կինոնկարը լայն լսարանին է ներկայացնում անվանի ծանրորդ, աշխարհի եւ Եվրոպայի կրկնակի չեմպիոն Նազիկ Ավդալյանի կյանքի եւ վերելքները, եւ վայրէջքները, բացահայտում էջեր, որոնց հնարավոր է՝ անգամ Ավդալյանի մտերիմները ծանոթ չեն:

Ավտովթարի հետեւանքով լուրջ վնասվածք ստանալով՝ Նազիկ Ավդալյանը յոթ տարի դուրս է մնում մեծ սպորտից, հետո վերադառնում եւ, չնայած շրջապատի անվստահությանը, մարմնական անմարդկային ցավերին, դառնում է Եվրոպայի կրկնակի չեմպիոն՝ ապացուցելով՝ եթե կան կամք եւ աննկուն ոգի, անհնար ոչինչ չկա:

Աննա Մաքսիմը, որ նաեւ մարմնավորում է Նազիկ Ավդալյանի կերպարը, ավելի վաղ նշել էր՝ պատմությունը բարձրացնում է հարցեր, տալիս է որոշ պատասխաններ:

«Ի՞նչ եմ ես ուզում, ի՞նչն է ինձ խանգարում դա անել, ինչքանո՞վ է իմ ցանկությունը կարեւոր նաեւ Հայաստանի համար: Ըստ իս՝ Նազիկ Ավդալյանը պատասխանել է այդ հարցերին», - շեշտել էր նա:

ԱՆՋԵԼԻՆԱ ՋՈԼԻԻ ԱՆԴՐԱԴԱՐՁԸ

Դժվար է հասկանալ, թե ինչպես դիվանագիտության համար այսպիսի ներուժ ունեցող աշխարհում Ուկրաինայի, Սուդանի, Գազայի, Եմենի, Կոնգոյի եւ շատ այլ վայրերի խաղաղ բնակիչները շարունակում են ամեն օր տառապել, գրել է դերասանուհի Անջելինա Ջոլին՝ Ուկրաինա կատարած այցից հետո:

«Կարծես իշխանության գլուխ գտնվողները ոչինչ չեն կարող անել այս հակամարտությունները դադարեցնելու եւ բոլոր խաղաղ բնակիչներին հավասարապես պաշտպանելու համար»,- գրել է դերասանուհին:

Նա հատուկ շեշտել է Խերսոնում եւ Նիկոլաեւում անօդաչու թռչող սարքերի սպառնալիքը՝ այն անվանելով իսկական «մարդկային սաֆարի»:

ԲԵՔՀԵՄԸ ԿԱՆԽԱՏԵՍԵԼ Է, ԹԵ ՈՎ ԿԴԱՌՆԱ ՌՈՆԱԼԴՈՒՆ ԿԱՐԻԵՐԱՆ ԱՎԱՐՏԵԼՈՒՑ ՀԵՏՈ

Անգլիայի հավաքականի եւ «Մանչեսթեր Յունայթեդի» նախկին կիսապաշտպան Դեւիդ Բեքհեմը կիսվել է իր կարծիքով այն մասին, թե ինչ կանի պորտուգալացի կիսապաշտպան Կրիշտիանու Ռոնալդուն ֆուտբոլային կարիերան ավարտելուց հետո:

«Ես Ռոնալդուին չեմ տեսնում որպես մարզիչ: Կարծում եմ՝ նա կցանկանա դառնալ ֆուտբոլային ակումբի սեփականատեր: Կրիշտիանուի համար կան ավելի կարեւոր բաներ, քան մարզիչ լինելը: Նա մարդ է, ով ցանկանում է նվաճել աշխարհը», - անգլիացու խոսքերն է փոխանցում Tribal Football-ը:

Ռոնալդուն այժմ խաղում է Սաուդյան Արաբիայի «Ալ-Նասր»-ում:

40-ամյա հարձակվողի գործող պայմանագիրը ակումբի հետ լրանում է 2027 թվականի ամռանը: Նրա շուկայական արժեքը գնահատվում է 12 միլիոն եվրո:

ՄԱՐԶԱԿԱՆ

ՄԻԱՑԵԼ ԵՆ ՀԱՎԱՔԱԿԱՆԻՆ

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմը շարունակում է ուսումնական մարզական հավաքը Հունգարիայի եւ Պորտուգալիայի դեմ խաղերից առաջ:

Ինչպես հայտնում են Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիայից, Հրանտ Լեոն Ռանոսը, Գեորգի Հարությունյանը եւ Ստյոպա Մկրտչյանը ժամանել են Երեւան: Նրանք ազգային հավաքականի ճամբարում են: Ավելի ուշ հավաքականին կմիանան նաեւ Էդուարդ Սպերցյանն ու Նաիր Տիկնիզյանը:

Նոյեմբերի 13-ին Եղիշե Մելիքյանի թիմը կհանդիպի Հունգարիային: Երեք օր անց մրցակցի հարկի տակ որակավորման փուլի վերջին խաղը կանցկացնենք Պորտուգալիայի հետ:

ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՄՐՑՈՒՄՆԵՐ

2025 թվականին ՀՀ վարչապետի հովանու ներքո առաջին անգամ անցկացվում է «Դպրոցականների վոլեյբոլի լիգա» մարզական խաղերը: Ինչպես տեղեկացնում են Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ԿՄՍ վարչությունից, «Դպրոցականների վոլեյբոլի լիգան» անցկացվում է 2 տարիքային խմբերի դպրոցականների՝ 6-7-րդ եւ 8-9-րդ դասարանների աշակերտների միջեւ:

Գեղարքունիքի մարզում առաջինը մրցապայքարի մեջ են մտել Սեւանի համայնքային փուլի 1-ին տարիքային խմբում հայտ ներկայացրած դպրոցները: Այն անցկացվել է նոյեմբերի 7-ին՝ Սեւանի ավագ դպրոցի մարզադահլիճում: Այստեղ ուժեղագույնը Ջովաբերի Ե. Չարենցի անվան միջնակարգ դպրոցի թիմն էր: Երկրորդ եւ երրորդ հորիզոնականները զբաղեցրել են համապատասխանաբար Սեւանի թիվ 5 եւ Դդմաշենի միջնակարգ դպրոցների թիմերը:

Հաջորդ օրը մրցապայքարի մեջ են մտել 2-րդ տարիքային խմբում հայտավորված թիմեր: Հետաքրքիր մրցապայքարի արդյունքում հաղթող է ճանաչվել Սեւանի Մեսրոպ Մաշտոցի անվան թիվ 1 հիմնական դպրոցի թիմը: Երկրորդ հորիզոնականը զբաղեցրել է Սեւանի Վ. Կարապետյանի անվան թիվ 3, իսկ երրորդ հորիզոնականը՝ Սեւանի թիվ 4 հիմնական դպրոցների թիմերը:

Գավառում մրցաշարի համայնքային փուլը մեկնարկել է նոյեմբերի 8-ին: Խաղերն անցկացվել են Գավառի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի մարզադահլիճում: Այդ օրը մրցապայքարի մեջ են մտել 1-ին տարիքային խմբում հայտ ներկայացրած դպրոցական թիմերը: Արդյունքում առաջին տեղը գրավել է Գավառի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի թիմը, երկրորդ հորիզոնականը զբաղեցրել է Գավառի Հ. Թումանյանի անվան թիվ 3 հիմնական դպրոցի թիմը, իսկ երրորդ տեղը բաժին է հասել Ծաղկաշենի միջնակարգ դպրոցի թիմին:

Նոյեմբերի 9-ին մրցապայքարի մեջ են մտել 2-րդ տարիքային խմբի թիմերը: Այստեղ եւս ուժեղագույնը Գավառի Պ. Ղանդիլյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի թիմն է: Երկրորդ տեղը բաժին է հասել Սարուխանի Մ. Խոստեղյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի թիմին, իսկ երրորդ հորիզոնականը զբաղեցրել է Նորատուսի Ա. Սողոմոնյանի անվան թիվ 2 միջնակարգ դպրոցի թիմը:

● *Նոյեմբերի 14-ին՝ 15:00-ին, Խամաճիկների պետական թատրոնում տեղի կունենա «Սպիտակաձյունիկը» ներկայացումը: Տոմսերի արժեքը՝ 1.500 դրամ:*

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՏՆՏԵՍԱԿԱՆ

ՀԱՐՑ. Որո՞նք են հողամասերի ընդհանուր սեփականության, ընդհանուր օգտագործման իրավունքները:

Աննա Սեդրակյան (60 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Երկու կամ մի քանի անձանց մոտ սեփականության, օգտագործման ներքո գտնվող հողամասը նրանց է պատկանում համապատասխանաբար՝ ընդհանուր սեփականության, ընդհանուր օգտագործման իրավունքով:

Հողամասի նկատմամբ ընդհանուր սեփականության իրավունքը ծագում է երկու կամ մի քանի անձանց սեփականության իրավունքով այն հողամասն անցնելիս, որը չի կարող բաժանվել առանց դրա նպատակային նշանակության փոփոխման կամ օրենքի ուժով ենթակա չէ բաժանման, ինչպես նաեւ սեփականատերերի կողմից իրենց պատկանող հողամասերը կամովին՝ պայմանագրի հիման վրա մեկ հողամասում միավորելիս:

Օրենքներով եւ այլ իրավական ակտերով, հողաշինարարական եւ քաղաքաշինական փաստաթղթերով սահմանվում են հողամասերի նվազագույն չափերը, որոնցից ցածր չի թույլատրվում ընդհանուր սեփականությունից առանձնացնել հողամասեր (ըստ օրենքի՝ անբաժանելի հողամասեր):

ՀՀ շրջակա միջավայրի նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Սեփականատերերից մեկին պատկանող շենքի, շինության վերակառուցումը չի հանգեցնում ընդհանուր հողամասում նրա բաժնի մեծացմանը՝ առանց մյուս սեփականատերերի համաձայնության:

Էջը՝ ԱԼՎԱՐԴ ԿՈՇԿԱԿԱՐՅԱՆԻ

ԿԱՐԳ

ՀԱՐՑ. Որո՞նք են ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողների իրավունքները:

Նելլի Մասխուդյան (29 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներն ունեն իրենց երեխայի հետ համատեղ ապրելու եւ նրա դաստիարակությանը մասնակցելու իրավունքներ:

Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներից երեխա ծնվելու դեպքում, ինչպես նաեւ նրանց մայրությունը եւ (կամ) հայրությունը որոշելիս ծնողները ամուսնության տարիքը լրանալուց հետո կարող են ինքնուրույն իրականացնել ծնողական իրավունքները:

Մինչեւ անչափահաս ծնողների ամուսնության տարիքը լրանալը նրանց երեխայի համար կարող է նշանակվել խնամակալ, որը անչափահաս ծնողների հետ համատեղ կիրականացնի այդ երեխայի դաստիարակությունը: Երեխայի խնամակալի եւ անչափահաս ծնողների միջեւ առաջացած տարաձայնությունները կարգավորում է խնամակալության եւ հոգաբարձության մարմինը:

ՀՀ քաղաքացիական կացության ակտերի գրանցման գործակալություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ամուսնության մեջ չգտնվող անչափահաս ծնողներն իրավունք ունեն ընդհանուր սկզբունքներով ընդունելու կամ վիճարկելու իրենց հայրությունը եւ մայրությունը:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարն արվել է Էրեբունի-Ազատամարտիկների փողոց խաչմերուկում

Արդեն ավելի քան մեկ շաբաթ Էրեբունի վարչական շրջանի մի շարք նոր ասֆալտապատված փողոցներում բացակայում են հետիոտնային անցման գծանշանները եւ հոծ գծերը: Քաղաքացիները ստիպված են աչքաչափով կամ լուսացույցի միջոցով կողմնորոշվել՝ ինչպես անցնեն փողոցը: Նույն իրավիճակն է նաեւ մեքենաների համար՝ վարորդները ստիպված են կանգնել՝ փորձելով հասկանալ երթեւեկության ճիշտ կարգը: Այս հանգամանքը բավականին վտանգավոր է թե՛ հետիոտների, թե՛ վարորդների համար: Պետք է նշել, որ միայն մեկ փողոց չէ, որ այս վիճակում է. նույն իրավիճակում են բազմաթիվ այլ փողոցներ եւս:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ. 52-53-01

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԵՂԱՆԱԿԻ ՏԵՍՈՒԹՅՈՒՆ

Շիրակ	- 3 + 2 +13 + 16
Կոտայքի լեռներ	- 2 + 2 +13 + 15
Կոտայքի նախալեռներ	+ 4 + 7 +14 + 16
Գեղարքունիք	- 3 + 2 +11 + 15
Լոռի	- 1 + 3 +14 + 18
Տավուշ	+ 4 + 8 +15 + 19
Արագածոտնի լեռներ	- 3 + 2 +11 + 15
Արագածոտնի նախալեռներ	+ 3 + 7 +14 + 17

Արարատ	+ 4 + 7 +17 + 20
Արմավիր	+ 3 + 6 +17 + 20
Վայոց ձորի լեռներ	- 2 + 2 +12 + 15
Վայոց ձորի նախալեռներ	+ 3 + 8 +16 + 20
Սյունիքի նախալեռներ	0 + 3 +14 + 18
Սյունիքի հովիտներ	+ 4 + 8 +18 + 22
ԼՂՀ	+5 + 9 +17 + 19
Երեւան	+7 + 9 +14 + 16

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը:
Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **11.11.2025**
Տպաքանակ՝ 3968
Հասցեն՝ Գեղարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում:

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. *«Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:*